

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Սիրելի պատգամավորներ Ազգային-Եկեղեցական Ժողովին, բացառիկ հաճույք է, որ մեր ազգը այս առիթն ունի գումարելու հանուն Հայաստանյայց Եկեղեցիին և առաջին անգամն է, որ անկախ պետության մը հովանիի ներքև Հայաստանյայց Եկեղեցվո Ազգային-Եկեղեցական Ժողովը կգումարվի: Առաջին անգամն է, որ ուղղակի Հանրապետության նախագահին հրավեր ուղղված է՝ բացման այս առաջին նիստին ներկա լինելու և իր բարի գալուստի խոսքը կատարելու: Առաջին անգամն է, որ պետության նախագահը ընդունած է այդ հրավերը, և այս մենք կատարեցինք ոչ միայն վստահության հավատքով, որ մեր հայրենի հողին մեջ մեր պետությունը գիտե և կճանչնա իր ժողովուրդին հոգեկան արժեքները, հոգիին կյանքին անհրաժեշտությունը և հետևաբար ոչ միայն հովանավորն է մեր հողին, այլ հովանավորն է նաև մեր հոգևոր ժառանգության: Հրավիրած էինք նաև Արցախի Հանրապետության ներկայացուցիչները: Նախ կուզեմ շնորհակալություն հայտնել մեր հայրենի պետության, որ Ամենայն Հայոց Հայրապետի թաղման, հուղարկավորության արարողություններուն, ինչպես նաև բացառիկ Ազգային-Եկեղեցական Ժողովին գումարման առիթով ոչ միայն իրենց հովանավորությունը, աջակցությունը, այլև կազմակերպչական աշխատանքներուն մեջ իրենց նախաձեռնությունը, իրենց ներդրումը և պետական մակարդակով վայելուչ կարգադրությանց համար իրենց օժանդակությունը ցուցաբերեցին: Այսօր մենք հրավիրած ենք պարոն նախագահը՝ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, և իր ընկերակցին՝ Գագիկ Հարությունյանը, վարչապետ Հայաստանի Հանրապետության Հրանտ Բագրատյանը, նախագահ խորհրդարանի Բաբկեն Արարքցյանը, ինչպես նաև Հայաստանի կառավարությանն առընթեր կրոնական գործերի պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար Լազար Սուջյանը և «Հայաս-

տան» Համահայկական Հիմնադրամի տնօրենը՝ տիկին Մանուշակ Պետրոսյանը, Արցախի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահը՝ Ռոբերտ Քոչարյանը, հրավիրված էին վարչապետ Լեոնարդ Պետրոսյանը և նախագահը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանի Կարեն Բաբուրյանը, որ ներկա է և մեզի արդեն հայտնեց Ղարաբաղի Հանրապետության բարի մաղթանքները:

Ինձի համար հաճույք է, պատիվ է մասնավոր երախտագիտության հրավիրելու Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը՝ իր բարի գալուստի խոսքը ըսելու: